

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3739

281.6
g-52

u. p

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց Եկեղեցին իր պատմական կեանքի լնթացքում բարեփոխուել է հայ կեանքի զարգացման համբնթաց, ինչպէս վկայում են ազգային-Եկեղեցական ժողովների կանոնները։ Այս երեսոյթը նրա կենսունակութեան նշանակն է և կենդանութեան ապացոյցը։ Հայ Եկեղեցու բարենորոգութեան խնդրով նորագոյն ժամանակներում առաւելապէս զբաղուել է Հայ մամուլը, որ սակայն սիստեմի վերածած ամբողջական գործ չի տուել, այլ չօշափել է մասնական երեսոյթներ, պահանջելով ժամանակակից կեանքի համապատասխան ձեւակերպում տալ նոցա։ Վերջիր՝ 1917 թուից սկսած՝ այդ հարցով յատկապէս զբաղուեցաւ Ս. Էջմիածինը, երբ Ռուսական Փետրուարեան առաջին յեղափոխութիւնը տապալեց Յարական սէժիմը, եւ ազտառութիւն խոստացաւ կեանքի բոլոր ասպարէզներին։ Եկեղեցին հնարաւորութիւն ստացաւ իր բարենորոգութեան խնդիրները աւելի լայն չափով լուծելու փորձեր անել, և հէնց այդ թուին էլ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Էջմիածնի միաբանութեան խնդրանոք՝ հրաւիրեց Էջմիածնում Ռուսահայ հոգեւորականութեան համագումար՝ յատկապէս զբաղուելու Եկեղեցական բարենորոգութեան խնդիրներով, որի աշխատանքը նիւթ պիտի ծառայէր Ազգային-Եկեղեցական Ժողովին, որի մատագայ գումարումը անհրաժեշտութիւն էր համարում ինչպէս Էջմիածնի նոյնպէս նաեւ հայ Եկեղեցական համայնքների կողմից։

Յիշեալ ժողովը գումարուեցաւ մասնակցութեամբ 67 հոգեւորականների և տեւեց 11 օր, եւ ուր՝ Հայոց Եկեղեցու բարենորոգութեան վերաբերեալ բազմաթիւ խնդիրներ քննուեցան եւ ամբողջ աշխատանքը ներկայացուեցաւ Վեհափառ Հայրապետի տնօրէնութեան։

Ամենայն Հայոց Հայրապետը տեսնելով որ Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը կարող է շատ ուշանալ, անհրաժեշտ համարեց մի քանի կարեսը խնդիրների մասին պաշտօնապէս իմանալ Տանն կիլիկոյ Շնորհազարդ Կաթուղիկոսի, Երուսաղէմի և Կոստանդնուպոլսի Ամենապատիւ Պատրիարքների և կ. Պոլսի Կեդրոնական ու Կրօնական ժողովների կարծիքները, և ապա հրատարակեց հետևեալ Հայրապետական կանոնական կոնդակները։

Ա. — 1922 թ. Նոյեմբերի 11ին՝ թ. 644, որով արտօնում է այրի քահանաների կրկնամուսնութիւնը։

Բ. — 1922 թ. Նոյեմբերի 11ին՝ թ. 645, որով թուլատրում է ազգակցական հինգերորդ և խնամէական չորրորդ աստիճանի պատկները, այլ և վերացնում է ամուսնութեան վերաբերմամբ հոգեւոր ազգակցութեան ամէն տեսակ արգելքներ։



Գ. — 1923 թ. Նոյեմբերի 9ին՝ թ. 349, որով ընդունում է նոր տոմարը և պատուիրում նորանով առաջնորդուել։

Դ. — 1923 թ. Նոյեմբերի 9ին՝ թ. 350, որով թուլատրում է հայ Եկեղեցիներում ժամապաշտութեան ժամանակ երգեհոնի և երաժշտութեան գործածութիւնը։

Այս կարգի կոնդակներից է նաև 1917 թուի Ապրիլ 7ի թ. 678ը, որով վերահաստատում է ընտրական թեմական պատգամաւորական ժողովներ ու թեմական խորհուրդներ, վերականգնում է բոլոր Եկեղեցական պաշտօնական կանոն սկզբունքը եւ վերահաստատում կանանց սեռի ընտրական իրաւունք այլ մարդկանց հաւասար։

Ազգային-Եկեղեցական ժողովին է վերապահուած՝ Հայ Եկեղեցում ընդունուած կարգի համաձայն Հայրապետական կանոնական կոնդակներն ընդունել, եթէ նա կամենում է եղած որոշումները Հայ Եկեղեցու համար հաստատուն կանոն գարձնել։ Այսպէս վարուեցաւ 447 թուին գումարուած Շահապիվանի ժողովը, որ ընդունեց Տիեզերական

Հ 4870 - ԱԿ



65598-67

առաջին երեք ժողովները, որով նոցա կանոնները եւ դաւանական սահմանումները պարտագիր նշանակութիւն ստացան մեր Եկեղեցու համար:

Ամենայն Հայոց Հայրապետը՝ Գերագոյն Հոգեոր Խորհրդի համագործակցութեամբ՝ կամենալով Հայ Եկեղեցու բարեհնորոգութեան խնդիրը հիմնաւոր եւ լայն ծրագրով հանդէս բերել գումարուելիք Ազգային-Եկեղեցական ժողովի առաջ, 1923 թ. Յուլիսին հաստատում է և Հայոց Եկեղեցու Յարեկարգութեան Կեդրոնական Յանձնաժողով», որի մշակած հարցարանը ուղարկում է Համամիութենական սահմանների եւ գաղութային թեմերին, ժողովական կարծիքներ լսելու և ուսումնասիրութիւններ ստանալու նպատակով: Հարցարանի արծարծած խնդիրները ինքնին վկայում են, որ Կեդրոնական Յանձնաժողովը ունեցել է բարեհնորոգչական լայն ծրագիր. ինչպէս են. 1. Ժամագրքի կը բաժառում եւ բարեփոխում. 2. Ծխարան-Մաշտոցի կրճատում եւ բարեփոխում. 3. Ճաշոցի կրճատում եւ բարեփոխում. 4. Տօնացոյցի կրճատում եւ բարեփոխում. 5. Հայոց Եկեղեցու ընդհանուր սահմանադրութեան մշակում եւ այլ հարցեր:

Գերագոյն Հոգեոր Խորհուրդը, նկատի առնելով ամենուրեք հայ կեանքի, մանաւանդ Եկեղեցական կեանքի ոչ նորմալ պայմանները, այլ եւ լայն հանգամանքը, որ գաղութահայութիւնը մեղ է՝ որ յայտնի եւ է՝ որ անյայտ պատճառներով, փաքրաթիւ պատգամաւորներով է մասնակցում այս ժողովին, նպատակայարմար չի գտնում հանդէս գալ լայն ծրագրով, այլ իր ծրագիրը սահմանափակում է կարեւորագոյն խնդիրներ միայն արծարծելով:

Եկեղեցական բարեհնորոգութեան լայն ծրագիրը պիտի չօշափէր քրիստոնէական կեանքի բոլոր արտայայտութիւնները. սակայն այժմ պիտի բաւականանք միայն արծարծելով՝ Ա. Ծխական արարողական խնդիրներ և Բ. Ընդհանուր հարցեր, որոնք լուծման են կարօտում:

ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.

Ա. — Ժամակարգութիւն. — Հայ Եկեղեցու աստուածպաշտութիւնը ունի իր այլ և այլ արտայայտութիւնները, որոնցից մեկը Եկեղեցու ժամակարգութիւնն է: Հայ Եկեղեցու ժամակարգութիւնը՝ ընդհանուր քրիստոնէական Եկեղեցու աղքեցութեան ներքոյ եւ ժամանակի ոգու եւ հայեացքների թելագրութեամբ՝ գարերի ընթացքում հետզհետէ փոփոխուել է բարդանալով և ստացել է այսօրույ պատկերը: — 1. Գիշերային ժամ. 2. Առեալալի ժամ (այժմ միայն մեծի պահոց օրերին է կատարում). 4. Ճաշու ժամ, երեք ժամի բաժանուած ժամերգութեամբ, այն է՝ երրորդ, վեցերորդ և իններորդ ժամերին կատարուող, որ այժմ միացած է կատարուում. 5. Երեկոյեան ժամ. 6. Խաղաղական ժամ և 7. Հանգստեան ժամ: Ժամանակի պահանջը ստիպել է աղօթքի պահը գարձել է երեք: 1. Առաւոտեան. 2. Ճաշու և 3. Երեկոյեան: Առաջին երեք պահերը միացել են և կազմել են Առաւոտեան ժամ, ճաշու երեք ողորմեանները Ա. Պատարագի հետ՝ ճաշու ժամ, և վերջին երեքը միանալով կազմել են Երեկոյեան ժամ:

Եկատի առնելով այս հարցի մասին Կեդրոնական Յանձնաժողովի անունով թեմերից ստացուած առաջարկները, 1917 թուր կուսակրօն և աշխարհիկ հոգեորականութեան համագումարի որոշումները, այլ և մամուլում արծարծուած կարիքները, հետեւեալ ամս փոփոխմը կարելի է տալ — Ընդհանուր Եկեղեց կեանքի պահանջներին, փոփոխութեան հնֆարեկել Հայ Եկեղեցու ժամակարգը, ղեկավարուելով միօրինակութեան եւ առաքելական Եկեղեցու պարզութեան սկզբունքներով. ըստ այսի՝ 1. Վերացնել լուր օրերի ժամասացութիւնները. ինչպէս եղել է քրիստոնէական Եկեղեցու մէջ մինչև երերորդ գարու վերջերը: 2. Ժամասացութիւն կատարել միայն կիւրակէ և տօն օրերին: 3. Գիշերային և առաւոտեան ժամերգութիւն կատարել միայն կիւրակէ և տօն օրերին, սակայն կրճատումներով: 4. Արեւագալի ժամերգութիւնը պահել մեծի պահոց օրերին: 5. Վերացնել մեծի պահոց օրերի ճաշու ժամը և պահել միայն Ա. Պատարագ մատուցուելիք օրերին, այն ևս՝ Պատարագին կից: 6. Ամէն կիւրակէ և տօն օրերին

Պատարագ մատուցանել: 7. Երեկոյեան ժամերգութիւնը թողնել անփոփոխ, և կատարել միայն Շաբաթ եւ կիւրակէ օրերին: Խաղաղական ժամերգութիւնը նոյնպէս պահել մեծի պահոց Եկեղեցական, բայց կրճատել: 9. Հանգստեան ժամերգութիւնը անփոփոխ պահպանել, սակայն կատարել միայն արտակարգ գէպքերում, ինչպէս այժմ սովորութիւն է: Այս հարցի արծարծումը ժողովի առաջնորդը կը պարզէ իր տեսակէտը, ինչպէս այս նոյնպէս նաև պաշտամունքի միւս մասերի նկատմամբ, երբ զեկուցման պաշտամունքի մասը ամբողջանայ, այլպէս ասում՝ իր տեսակէտը կ'արտայայտէ Ատենի ժամագրքի, Տօնացոյցի, ճաշոցի և Մաշտոցի կրճատումների և վերախմբագրման մասին:

Բ. — Եկեղեցական տօներ. — Հայ Եկեղեցու ժամակարգութեան նման՝ Հայ Եկեղեցու առներն էլ հետզհետէ ին զարգացել ընդհանուր քրիստոնէական Եկեղեցու պաղպեցութեամբ և հետեւողութեամբ: Տօների զարգացումը պատճառ է եղել ամենօրեայ աստուածաշտութեան կարգի առաջ աղալուն: Թէ՛ 1917 թուրի հոգեորականների համագումարը և թէ՛ Կեդրոնական Յանձնաժողովի թեմերից ստացած զրութիւնները կողմնակից են տօների կրճատման, և առաջարկում են տօների ընտրութիւնը հետեւեալ սկզբունքներով կատարել: 1. Պահել այն Տէրունական տօները, որոնք Փրկչի կեանքի եւ գործունէութեան չեշտուած մոմենտներն են պատկերացնում: 2. Պահել այն սրբոց տօները, որոնք համաքրիստոնէական կամ Հայկական բնոյթ և արժէք ունին: 3. Համախմբումներ կատարել մարգարէից, հայրապետաց, մարտիրոսաց և մի օր էլ նուիրել Ամենայն սրբոց տօներին: Այս հարցի արծարծման հետ կապուած է Տօնացոյցի վերախմբագրման ինդիբը:

Գ. — Եկեղեցական Խորհուրդներ եւ Մրգազան Արքուղութիւններ. — Կեդրոնական Յանձնաժողովի անունով թեմերից ստացուած զրութիւնները նշում են Խորհուրդների արտազական մասի կրճատման անհրաժեշտութիւնը, ոմանք նաև կրճատուելիք հատուածները: Իսկ սրբազան արարողութիւնների նկատմամբ, որոնք բաւականաչափ հետամսական սովորութիւնների գրոշմ են կրում, առաջարկում է հանել Մաշտոցից: Այլպէս օրինակ 1. Կանոն գիշերային ժամու աղօթից, որ կատարի ի վերայ ծանր հեւանդաց, ի բժշկութիւն ցաւոց և ի թողութիւն յանցանաց: 2. Կանոն գժուարածին լուծ: 3. Կանոն վանա այսահարաց և լուսնոտից: 4. Կանոն նորոց սափերելոյ զերս պատահույն: Եւ այսպէս այլ կանոններ, որոնց մեծ մասը այսօր ալլես չի կատարուում: Այս հարցերի արծարծմամբ Մաշտոց-Ծխարանի վերախմբագրման հարցն է զրում սեղանի վրայ:

Դ. — Ճաշոցի կրճատման խնդիր. — Ճաշոց գիրքը պարունակում է տարուայ բուլոր տօնելի օրերին կարգացուելիք զրքերն ու աւետարանները. նաև մեծ տօների նըրշամկութիւնը լուսաբանող դասական հայրերի թղթերն և աղօթքները: Ընդհանուր կարծիք է եղել և է այսօր՝ կրճատել չափազանց երկար ընթերցուածները, որոնք առանց կազմել երկար ժամասացութիւնը ևս առաւել երկարացնում են, յոդնեցնելով և ձանձրոյթ պատճառելով աղօթքաւորներին, փոխանակ նոյց միսիթարելու և ոգեօրելու:

Գիշերային Հոգեոր Խորհուրդը ժամակարգութեան, տօների, խորհուրդների ու սրբազան արարողութիւնների և ընթերցուածների կրճատման հարցը, այլպէս ասած Ատենի ժամագրքի, Տօնացոյցի, ճաշոցի եւ Մաշտոցի վերախմբագրման հարցը՝ համարում է կարեւոր և հասունացած: Սակայն նկատի առնելով, որ Եկեղեցու պաշտամունքը լիշտակուած բոլոր ժամանակների, աւել և այլ ժամանակների, ուրեմն և այլ աշխարհայեցքների եւ կենցաղական պայմանների ծնունդ են հետզհետէ զարգացել, կարեւոր է ուսումնականի նոցա ծագման և զարգացման պատմութիւնը, որ կրճատումները հիման կարու կրճատման միջնական սկզբունքներով:

Ճնարարէր կեզրոնական Բարձրագոյն Հոգեւոր իշխանութեան, որ նա մասնագէտ անձանց ձեռքով, ժողովի նշած սկզբունքների համաձայն, ուսումնասիրել տայ հարցը, ապա այդ ուսումնասիրութիւնները ապազրել տայ, որ Տանն Կիլիկիոյ Կաթուղիկոսը, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ պատրիարքները, թեմակալ առաջնորդները, հայ մամուլը եւ թեմական երեսփոխանական ժողովները քննարկեն, և ապա թէ գործադրութեան սանկցիա ստանայ Ամենայն Հայոց Կաթուղիկոսից Հայրապետական կոնդակով, եթէ միայն հնարաւոր չի լինի յատուկ այդ նպատակով Ազգային-Եկեղեցական ժողով գումարել:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ.

1.— Հայ հոգեւորականութեան ցենզի խնդիր .— Ներկայ հոգեւորականութիւնը միւ-
այն մի կոչում և մի նպատակ ունի, այն է՝ հանդէս գալ իրեւ աւետարանի քարոզիչ,
դաստիարակել հայ ժողովրդին քրիստոնէական ողով և եկեղեցու վերածնութեան ուղին
հարթել : Այս նպատակին ծառայելու համար, նոր հոգեւորականութիւնը զինուած պիտի
լինի նորագոյն զիտութեամբ, ունենայ փիլիսոփայական եւ քրիստոնէական լայն աշ-
խարհայեացք : Նա հիմնականորեն ծանօթ պիտի լինի ներկայ բնական գիտութիւնների,
իմաստափրութեան եւ սոցիալական զիտութիւնների եզրակացութիւններին, ուսումնա-
սիրած լինի կրօնների և ընդհանուր ազգերի պատմութիւնը, իւրացրած լինի քրիստո-
նէական կրօնի հիմնական սկզբունքները եւ այն՝ իր կեանքի առաջնորդ եւ զեկավար
ձանաչէ : Նոր հոգեւորականութիւնը, մանաւանդ բարձր հոգեւորականութիւնը, կարո-
ղութիւն պիտի ունենայ ըմբռնելու իր ժամանակաշրջանի ողին ու ուղղութիւնը, պիտի
հասկանայ թէ ո՞ւր է գնում ընդհանուր շարժումը, և իրեն յանձնուած նաւի ղեկը այն-
պէս ուղղէ, որ նաւը խաղալիք չգառնայ ժամանակի տարուբեր հոսանքներին : Եւ ահա
այս նպատակին ծառայելու համար նոր հոգեւորականութիւնը պիտի ունենայ բարձրա-
գոյն կրթութիւն՝ ընդհանուր եւ մասնագիտական բնոյթ կրող : Մօտաւորապէս այս տե-
սակէտն ունին նաեւ 1917 թուի հոգեւորականների համագումարը եւ Կեդրոնական Յան-
ձնաժողովին թեմերից ուղղուած պատասխանները :

2.—Կուսակրօն հոգեւորականութիւն . — Դեռ ևս առաքելական դարում անաշմուսնական կեանքը գերադաս էր համարուել ամուսնականից , ապացոյց Պօղոս առաքեալի Կորնթացոց գրած Ա. Թուղթը (է. 1, 2, 8): Այս հայեացքը հետզհետէ զարգացաւ , և Դրւ գարում այլ եւ այլ պատճառներով շատ տարածուեցաւ եւ կուսակեանքը մանաւանդ պատշաճ և վայել համարուեցաւ հոգեոր դասին համար : Հետզհետէ տիեզերական եկեղեցու մէջ յառաջ եկան կանոններ , որով բարձր հոգեորականութեան արգելում էր ամուսնանալ , եթէ նա մինչեւ սարկաւագութիւն չէր ամուսնացել : Ե . գարում այս աշխարհայեացքը պատւաստում է նաեւ մեր երկրում , որին ամենայն հաւանականութեամբ նպաստում են նաեւ մեր քաղաքական կեանքի պայմանները . եւ ահա սկիզբ է առնում հայ եկեղեցում վանական կուսակրօն կեանքը , որ ապագայում մեր կեանքի քաղաքական , կուլտուր-կրթական եւ զրական ասպարէզներում խոշոր գեր է խաղում : Վերջին տասնամեակներում յաճախ արծարծուել է կուսակրօնութեան վերացման հարցը : Այս հարցը արծարծուել է նաև 1917 թուի համագումարում եւ մտքերի երկու հոսանք յառաջ բերել : Մի հոսանքը կողմակից է կուսակրօնութեան վերացման , համարելով այն անբնական երեսոյթ և ուխտազրժութիւնը անխուսափելի , այլ և այն հանգամանքը , որ ամուսնութիւնը սրբագործուած է եկեղեցու կողմից և ամուսնացած եալիսկոպութիւնը ճանաչուած թէ՛ մեր և թէ՛ տիեզերական եկեղեցում : Միւս հոսանքը հակառակ վերոյիշեալին պնդել է , որ բժշկական տեսակէտով անբնական եւ վնասակար երեսոյթ չէ անամուսնական կեանքը եւ ուխտազրժութիւնը վերացման հիմք չի կարող ծառայել , քանի որ նոյն երեսոյթը աւելի մեծ չափերով տեղի ունի նաեւ աշխարհիկ հոգեւորականութեան եւ աշխարհականների մէջ : Ժողովը որոշել է պահել կուսակրօնութիւնը : Այս հարցի նըկատմամբ կեղրուսական Յանձնաժողովի ստացած պատասխաններն եւս ընդհանուր առ

մամբ կուսակրօնութեան պահպանման տեսակէտն են չեշտում, սակայն այստեղ եւս երկու հոսանք է նշմարում այլ ուղղութեամբ։ Մի հոսանքը պահանջում է նրանից բարձր կրթական ցենզ և առաջնորդական պաշտօններից գուրս պարտադիր է համարում նոցա մնալը վանքում, և գիտութեամբ ու գեղարուեստով պարապելն անհրաժեշտ՝ համապատասխան իրենց հակումների և պատրաստութեան։ Իսկ միւս հոսանքը հակառակ է նորա պաշտօնավարութեան և կողմանակից է վերապահելու նրան ձեռնադրութեան իրաւունք եւ եկեղեցու ու աշխարհիկ հոգեւորականութեան նկատմամբ հոգեւոր տեսչութիւն, սակայն ոչ իշխողի, այլ բարոյական հեղինակութեամբ դիտողի եւ ղեկավարի հանգամանքով։ Թւում է թէ վերջին տարիների փորձը անշուշտ բոլորին էլ բերած կը լինի այն համոզմունքին, որ կուսակրօն հոգեւորականութիւնը անհրաժեշտ է եկեղեցու գոյութեան պահպանութեան համար։

3. — Ամուսնական եւ ամուսնալուծական հարցեր. — Հայ Եկեղեցին յիշեալ կանոնական հարցերի նկատմամբ այլ և այլ պատմական ժամանակաշրջաններում արել է ժողովական տարբեր որոշումներ՝ արձագանդ տալով իրական կեանքի պահանջներին, մասսամբ ևս յարմարուելով քաղաքական իշխողների ազդեցութեան։ Ամուսնական (հասուչ հաս) խնդիրներով զբաղուել եւ որոշումներ են արել մեր Եկեղեցում մեզ յայտնի հետեւեալ ժողովները։ Սշահիշատ (365), Շահապիվան (447), Պարտաւ (768) եւ Երուսաղէմ (1651)։ Առաջին երկուուը թոյլատրել են Յուտասինի թէ՛ արենակցական և թէ՛ խնամէշական պսակներ։ Պարտաւի ժողովը՝ արենակցական 4րդ աստիճանի եւ Երուսաղէմինը՝ արենակցական 5րդ աստիճանի պսակը։ Պարզ է թէ կանոնական արգելք չկայ, որ Ամենայն Հայոց Հայրապետը այդ սահմանների մէջ կանոնական կոնդակներ արձակէ կեանքի պահանջների հետեւանքով։ Յայտնի է, որ մեր Եկեղեցում 15րդ դարում իսկ արենակցական 6րդ աստիճանի պսակներ անդամ չէին թոյլատրում, և կամ թոյլատը ուում էին ոչ յօրինակ այլոց։ 1917 թուի համագումարը որոշեց խնդրել հանդուցեալ Հայրապետէն հաս համարել արենակցական 6րդ եւ խնամէշական 4րդ աստիճանները եւ թոյլատրել անարգել կատարել։

Երջանկայիշատակ Հայրապետը նախապէս բանակցելով Տանն կիլիկիոյ Կաթուղիկոսի և Երուսաղէմի և կ. Պոլսոյ Պատրիարքների հետ, նաև նկատի առնելով նոր կեանքի պայմանները 1922 թ. Նոյեմբերի 11-ին արձակում է թ. 645 կանոնական կոնդակը, որով Ցոյլատրում է ազգակցական հրա և խնամէական 4րդ աստիճանի պսակը, և վերացում է հոգեսոր ազգակցութեան ամեն տեսակ արգելքներ ամուսնութեան վերաբերմամբ։ Ներկայ կեանքը այս սահմաններից ելնելու փորձեր չի անում, ուստի պէտք է պահել այդ սահմանը։

Գալով ամուսնալուծութեան և ամուսնալուծական հարցերին, Հայոց Եկեղեցին պահպանելով աւետարանի սկզբունքը, գուցէ և հետեւողութեամբ Ռուսաց Եկեղեցու պրակտիկային՝ Պոլոժենիայի գոյութեան ընթացքում, ամուսնալուծութեան կիմք համարել է միայն և զիսաւորապէս ամուսնական ուխտի անհաւատարմութիւնը։ Գերազոյն Հոգեոր Խորհուրդը վերջերս միայն և այն ևս կեանքի սափողական պահնանջների առաջ տեղի տալով՝ թեթեացրել է ամուսնալուծութիւնը, նաև այլ պայմաններ ամուսնալուծութեան հիմք ձառայեցնելով։ Այս հարցի նկատմամբ լաւագոյն կը լինի ընդունել Շահապիվանի ժողովի որոշումը, որով ամուսնութիւնը լուծելի է համարում հետեւեալ պատճառներով։ 1. Ամուսնական անհաւատարմութիւն։ 2. Ամուսնութիւն։ 3. Մարդուական և հոգեկան արատներ։ 4. Արբեցողութիւն։ 5. Անհաշտ բնաւորութիւն (ծեծ, կու և այլն)։

4.— Նոր-Տամարի հարց.— Նոր կամ Գրիգորեան Տոմարի գործածութիւնը Հայ Եկեղեցում ընդունելու հարցով էջմիածինը զբաղուել է գեռ եւս 1918 թուի մեծ Յեղափոխութիւնից առաջ, և այս առթիւ յատուկ գրութիւն է ուղարկել Մուսական Սինոդին, վերջնիս ծրագրներին իրազեկ լինելու նպատակով։ Բնականաբար այս հարցի

լուծումը արագացաւ, երբ ներկայ Պետութիւնը ընդունեց նոր տոմարը, որից յետոյ 1922 թուին Ռուսաց պատրիարքը նոյնպէս ընդունեց նոր տոմարը, որին հետեւց նաև Պրավուլավ Եկեղեցու ճիւղը՝ Վրաց Եկեղեցին։ Ահա այս պայմանների մէջ դժուար պիտի լինէր Հայոց Հայրապետի համար Համամիութենական սահմաններում բոլոր միւս քրիստոնեաց Եկեղեցիներից անջատուել և մենակ առաջնորդուել հին տոմարով, մանաւանդ թէ արտասահմանում հայ գաղութներից ոմանք վաղուց տրամադրութիւն էլին ցոյց տուել նոր տոմարի անցնելու։ Եւ ահա 1923 թ. Նոյեմբերի 9-ին արձակուում է թ. 349 Հայրապետական կոնդակը, նոր տոմարը ընդունելու մասին, և ըստ այնմ այդ թուից կազմուում է իջմիածնի օրացոյցը նոր տոմարով։ Դժբախտաբար Հայրապետական կոնդակի հրատարակուելուց անմիջապէս յետոյ՝ Ռուսաց Պատրիարքը՝ ուսւ հաւատացեալ ժողովրդի պահանջի հետեանքով, զուցէ և հետեելով Յոյներին, նահանջել և յետս էր կոչել իր կարգադրութիւնը։ Այդ իսկ պատճառով նոր Տօմարի գործածութեան տնօրէնութիւնը ջերմ ընդունելութիւն չի գտնում Համամիութենական սահմանների թեմերում, ուր հայ ժողովուրդը ուսւ և վրացի ժողովուրդների հետ սերտօրէն կապուած էր սովորոյթներով, ընտանեկան, վաճառականական և այլ հրմունքներով և սովոր էր եկեղեցական տօները միասին կատարել։ Այս դժուակութիւնը ևս առաւել ակնբախ և զգալի է դառնում Ս. Զատկի տօնին, որ յիշատակուած ժողովուրդները վաղուց սովոր են միասին տօնել և այժմ ստիպուած էին բաժան տօնել։ Նոր Տօմարն ընդունելու դժուառութեան առաջ կանգնած է և կանգնած էլ պիտի մնայ յատկապէս Ս. Երուսաղէմը, Եկեղեցական իրաւունքների պահպանութեան նկատմամբ դժուարութիւնների մէջ չընկնելու համար։ Ահա այս դժուարութիւնների առաջ կանգնած է Հայ Եկեղեցին Տօմարական հարցի առթիւ, որի վրայ հրաւիրում է Աղքային Եկեղեցական ժողովի ուշագրութիւնը։

5.— Եկեղեցական սիեմի փոփոխութեան հարց .— Այս հարցի առթիւ այլ և այլ տեղերից Հանգուցեալ Հայրապետի անունով խնդիրներ և միջնորդութիւններ են ստացուել, որով խնդրուում է թուղարել հոգեորականութեան արտաքոյ Նկեղեցու և ծիսակատարութեանց կրելու աշխարհիկ սքեմ։ Սորան հակառակ կայ և մի այլ հոսանք, որ կարեոր է համարում պահել հոգեորական սքեմը՝ նկատի առնելով, որ գարերի ընթացքում հայ ժողովուրդը սովորել է իր հոգեոր հօրը հոգեոր սքեմով տեսնել և յարգանք ու արժէք տալ այդ սքեմին։ Գերազոյն Հոգեոր Խորհուրդը կարծում է, որ յարմար կը լինի պարտադրել հոգեորականութեան հոգեոր սքեմ կրել եկեղեցում, օրինակատարութիւնների, պաշտօնական հանգէսների և հանգամանքների ժամանակ, որից դուրս՝ արտօնել նոցա աշխարհիկ սքեմ կրել։

6. — Աշխարհիկ նոգեւորականութեան ապահովութեան խնդիր . — Հայոց եկեղեցում ընդունուած սովորութեան համաձայն՝ աշխարհիկ հոգեւորականութիւնը իր պաշտօնավարութեան համար որոշ եւ հաստատուն վարձատրութիւն չի ստանում, այլ ապրում է օրինակատարութիւններից ստացած կամաւոր տուրքերով և զանձանակազրամով։ Վարձատրութեան այս եղանակը այլ ասպարէզներում չի կիրառուում, և ներկայ հասկացողութեամբ եւ քահանայութեան իր խոկ լմբոնմամբ համարում է այդ ձեւը վիրաւորական եւ նուաստացուցիչ, որի պատճառով քահանայութիւնը յաճախ կորցնում է իր ներքին անկախութիւնը եւ ենթարկում անհատ ծխականների քմահաճոյքին, ուստի առաջարկում է աղնուացնել նիւթական վարձատրութեան ձեւը, ընդունելով սոճկի տուչութեան սկզբանը, որ սրոշ տեղերում արգէն ընդունուած է :

7. — Παհիմի վերացման հարց . — Այս հարցը կեանքն ինքն է լուծել, քանի որ պահողների թիւը չատ է սահմանափակ դարձել եւ պահողներն եւ մեծ մասամբ ոչ իր ապրում, այլ իրեւ սովորոյթ են պահում: 1917 թուի համագումարը եւ կեղրոնական Յանձնաժողովի ստացած պատասխաններն եւ նոյնն են պնդում և կողմանակից են պատի վերացման: Գերազոյն Հոգեոր Խորհուրդը կարծում է, որ պէտք է թողնել միայն Զատկի

և Աստուածայայտնութեան տօների պասերը մի մի շաբաթ և Խաչելութեան յիշատակին նույրուած ուրբաթ օրուայ պասը, որով կը գագարի Օրէնքը գայթակղութեան աղբիւր գառնալէ։ Պասերի կրծատմամբ ինքնին յառաջ է գալիս պսակի օրերի նոր ընդլայնման հարցը։ Այս խնդրի նկատմամբ առաջարկ կայ անխտիր ամեն օր պսակ կատարել։ Գերազագոյն Հոգեսոր Խորհուրդը հնարաւոր է գտնում պսակի օրերի արգելքը վերացնել՝ համարելով արգելեալ օրեր միայն Ս. Զատկի և Ս. Ծննդեան շաբաթապասերը։

8.—Աստուածաբանութեան լեզուն .— Աստուածաբանութեան կարգի հետ աստուածաբաշտութեան լեզուն անցեալի ծնունդ է, որ իր ժամանակ ժողովրդին հասկանալի լեզու է եղել, բայց այժմ անհասկանալի է, ուստի և հասարակաց աղօթքը, որի նպատակն է ստեղծել ընդհանուր կրօնական տրամադրութիւն աղօթքոների մէջ և նոցամիացնել՝ չի ծառայում իր նպատակին: Այս հարցի նկատմամբ եղած առաջարկները, թարգմանել Ս. Գիրքը, շարականները և աղօթքները, ցանկալի են, բայց շատ գժուարի իրագործելի: Գիրագոյն Հոգեւոր Խորհուրդը հնարաւոր է գտնում թոյլատրել, որ Ս. Գրքի որոշ հատուածները և հայրերի թղթերը թարգմանարար կարդացուին եղած թարգմանութիւններից օգտուելով, մինչեւ որ հնարաւոր կը լինի Ս. Գիրքը ամբողջովին թարգմանած տեսնել:

Մինչեւ այժմ և կեղեցական բարենորոգութեան հարցն արծարծելիս մեծաւ մասամբ նկատի է առնուած քրիստոնէական կրօնի արտաքին արտայայտութիւնները եւ քիչ ուշազբութիւնն է դարձուած նորա բովանդակութեան վրայ, հաւատացեանների կրօնական ապրումների ու զգացմունքների վառ պահպանութեան վրայ։ Սակայն այդ արտաքին արտայայտութիւնների բարեփոխութիւնը միայն ի վիճակի չէ կերպարանափխելու մեր ժողովրդի կրօնական ըմբռնումը, վերածնելու նրան հոգեպէս եւ ստեղծել տալու նոր կեանք՝ քրիստոնէական նոր կենցաղ, որ բարենորոգութեան բուն նպատակը պիտի լինի։

Գերազոյն Հոգեսոր Խորհրդի տեսակէտով, այս վերջին ուղին հարթող միջոցները հետևեալներն են. — 1. Հիմնել մասնագիտական հոգեոր բարձրագոյն գպրոց՝ տեսական եւ գործնական աստուածաբանական ծրագրով եւ բնական գիտութիւնների ուսուցման լայն ծաւալով, որ ապագայ հոգեւորականացուն ձեռք բերէ քրիստոնէական եւ գիտական լայն աշխարհայեացք: Միաժամանակ ձեռք բերէ կրօնական ողի եւ խորը համոզմունք՝ քրիստոնէական բարոյական բարձր զաղափարների ճշմարտութեան եւ իր կենցաղով այլ աշխարհայեացքի մարմնացնոլը հանդիսանայ կեանքի մէջ, զատիքարակիչ օրինակ ծառայելով իր համայնքին: Այլապէս ասած՝ նոր հոգեւորականութիւն ստեղծէ, ընդունակ՝ նոր կեանքի պահանջներին գոհացում տալու: 2. Քրիստոնէական ուսմունքը կենդանի խօսքի միջոցով իւրացնել տալ համայնքին՝ նրա մէջ քրիստոնէական սիրո ողին կենդանացնելու և կեանքում համապատասխան կենցաղ ստեղծել տալու նպատակով: 3. Նպաստել կրօնա-բարոյական բնոյթ կրող գեղարուեստական երկերի զարգացման, կաղմակերպել կիրակնօրեայ դասախոսութիւններ և ծրագրուած զրոյցներ՝ մատաղսերնպի եւ ընդհանրապէս հաւատացեալ հօտի կրօնա-բարոյական դաստիարակութեան նպատակով: 4. Կաղմակերպել համայնքի մէջ գիտութեան և սիրոյ գործեր: 5. Հրատարակել Աստուածաբանական ամսաթերթ եւ կրօնական շաբաթաթերթեր: 6. Վերականգնել նուիրակութիւնը ազգային եկեղեցու միութիւնը պահպանելու, ի սիմեոս աշխարհի ցրուած գաղութահայութիւնը Մայր Աթոռի և Մայր երկրի — Հայրենիքի — հետ սերտօրէն կապելու նպատակով: Եւ վերջապէս Ս. Եկեղեցու արտաքին ծիսական կարգերն ու արարութիւնները նպատակայարձար կրծատութեանով եւ մշակուած քաղցրալուր գեղարուեստական երգով եւ երաժշտութեամբ վեհացնել: Ահա այն ուղին, որ կ'առաջնորդէ մեզ գէպի արտաքին ու ներքին ճշմարիխ բարենորոգութիւն:

3739.



hmt

3622

3622